ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԻՐԻՆԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Իրինդ համայնք
Հեռ. 098-34-39-09
irind.aragatsotn@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

14 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2016 թվականի N 34

## ԻՐԻՆԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆՈ 9 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12 հոդվածի պահանջով, Իրինդ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Իրինդի ավագանու Նո9 նիստի օրակարգը.

1. Իրինդ համայնքի 2017 թվականի տեղական բյուջեն հաստատելու մասին:
2. Համայնքի ղեկավարի ամսեկան դրույքաչափը սահմանելու մասին:
3. Իրինդի համայնքապետարանի աշխատակազմի և ՀՈԱԿ-ի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:
4. Իրինդ համայնքում 2017 թ. տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին:

Կողմ -3, Դեմ -0, Ձեռնպահ -0

Ավագանի՝
ԱՇՈՏ ՄԻՆԱՍՅԱՆ
ՀԱՅԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ
ՎԱՀԱԳՆ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ԻՐԻՆԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Բ. ՀԵՔՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՐԻՆԴ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտնի մարզ գյուղ Իրինդ
Հեռ-. 091343933
e-mail - lrind.aragatsotn@.mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

14նոյեմբերի 2016թ նո 35

## ԻՐԻՆԴԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ 2017 թ. ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով համայնքի զարգացման քառամյա ծրագիրը և ղեկավարվելով ՀՀ ՏԻՄ օրենքի 16-րդ հոդվածով ու «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածով Իրինդ համայնքի ավագանին

ՈՐՈՇԵՑ՝

Հաստատել Իրինդ համայնքի 2017թ. բյուջեն՝ համաձայն կից հավելված 1-ի:

Կողմ- 3 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Ա.Մինասյան
Վ. Մուրադյան
Հ.Մանուկյան

Իրինդ համայնքի ղեկավար Բ. Հերոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՐԻՆԴ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտնի մարզ գյուղ Իրինդ
Հեռ.. 091343933
e-mail - lrind.aragatsotn@.mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

14 նոյեմբերի 2016թ ն. 36

## ԻՐԻՆԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ԱՄՍԵԿԱՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ կետով Իրինդ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Սահմանել Իրինդ համայնքի ղեկավարի 2017 թվականի ամսեկան դրույքաչափը՝ 196000 (մեկ հարյուր իննսունվեց հազար ) ՀՀ դրամ:

Կողմ- 3 Դեմ- 0 Ձեռնպահ - 0

Ա. Մինասյան

Վ. Մուրադյան

Հ. Մանուկյան

Իրինդ համայնքի ղեկավար՝ Բ. Հերոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՐԻՆԴ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտնի մարզ գյուղ Իրինդ
Հեռ-. 091343933
e-mail - Irind.aragatsotn@.mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

14նոյեմբերի 2016թ. նո 37

## ԻՐԻՆԴԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ կետով, «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ կետով Իրինդ համայնքի ավագանին՝

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Իրինդի գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն կից հավելված 1-ին, 2-ի։

Կողմ- 3 Դեմ- 0 Ձեռնպահ - 0

Ա. Մինասյան

Վ. Մուրադյան

Հ. Մանուկյան

Իրինդ համայնքի ղեկավար Բ. Հերոյան

Հավելված N 1
ՀՀ Արագածոտնի մարզի Իրինդ
Համայնքի ավագանու
14 նոյեմբերի 2016թ նո 37

# ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԻՐԻՆԴԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Աշխատակիցների թվաքանկը՝10
Աշխատակազմի կառուցվածքը հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը 8.5

| Հաստիքի անվանումը | Հաստիքային միավոր | Պաշտոնային դրույքաչափ | Նպատակային սոց վճարի չափը | Ամսական աշխատավարձ |
|---|---|---|---|---|
| Համայնքի ղեկավար | 1 | 196000 | 9800 | 196000 |
| Տեղակալ | 1 | 86000 | | 86000 |
| Համայնքային ծառայության պաշտոններ | | | | |
| Աշխատակազմի քարտուղար 1.2-1 | 1 | 115.000 | | 115000 |
| Գլխավոր մասնագետ 2.3-1 | 1 | 109.000 | | 109000 |
| Առաջատար մասնագետ 3.1-2 | 1 | 86.000 | | 86000 |
| | Սպասարկող անձնակազմ | | | |
| Ջրերի պահակ /ջրբաշխ/ | 1 | 86000 | | 86000 |
| Գրադարան | 0.5 | 73000 | | 36500 |
| պահակ | 0.5 | 73000 | | 36500 |
| Հավաքարար | 0.75 | 73335 | | 55000 |
| Մեխանիզատոր | 0.75 | 73335 | | 55000 |
| | | | | |
| | | | | |
| Ընդամենը | 8.5 | | | 861000 |

Իրինդ համայնքի ղեկավար Բ. Հերոյան

Ավագանի՝
Ա.Մինասյան
Վ.Մուրադյան
Հ.Մանուկյան

Հավելված 2
ՀՀ Արագածոտնի մարզի Իրինդ
Համայնքի ավագանու
14 նոյեմբերի 2016թ նո 37

# ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ,,ԻՐԻՆԴԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ,, ՀՈԱԿ-ի ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Աշխատակիցների թվաքանկը 5
Աշխատակազմի կառուցվածքը հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը 3.25

| Հաստիքի անվանումը | Հաստիքային միավոր | Պաշտոնային դրույքաչափ | Նպատակային Սոց վճար | Վճարման ենթակա աշխատավարձ |
|---|---|---|---|---|
| Նախակրթարանի վարիչ | 0.75 | 73000 | 2737 | 54750 |
| դաստիարակ | 0.75 | 73000 | 2737 | 54750 |
| դաստիարակի օգնական | 0.75 | 73000 | 2737 | 54750 |
| խոհարար | 0.75 | 73000 | | 54750 |
| պահակ | 0.25 | 73000 | | 18250 |
| | | | | |
| | | | | |
| Ընդամենը | 3.25 | | | 237250 |

Իրինդ համայնքի ղեկավար Բ. Հերոյան

Ավագանի՝

Ա.Մինասյան
Վ.Մուրադյան
Հ.Մանուկյան

Հավելված
ՀՀ Արագածոտնի մարզի Իրինդ
համայնքի ավագանու
2016 թ նոյեմբերի 14 թիվ 38 որոշման

# ԻՐԻՆԴ ՀԱՄԱՅՆՔԻ 2017թ. ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

**հիմնական օբյեկտների համար՝**

ա) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող և հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 15000 դրամ.

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է մինչև 5000 դրամ:

**3. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝**

1) ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 500 դրամ.

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝1 500 դրամ:

Իրինդ համայնքի ղեկավար՝ Բ Հերոյան